ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ
Ճարտարապետության դոկտոր

ԳՈԹԱԿԱՆ, ԹԵ ՀԱՅ-ԳՈԹԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃ

Հայ ճարտարապետությունն իր երրորդ վերածննդի տարիներին նոր, մեծամեծ նվաճումների հասավ: 10-րդ դարի ընթացքում ստեղծվեցին մեկը մյուսին գերազանցող ճարտարապետական կոթողներ, այդ թվում Անիի Մայր տաճարը, Առաքելոցը, Գագկաշենը, Աբուհամրենցը, 11-րդ դարի սկզբում՝ Մարմաշենի համալիրը և այլ հրաշալի կառույցներ:

Այդ շինությունների արտաքին և ներքին ձևավորումներում տեղ էին գտնում ժամանակի ճաշակին ու ըմբռնումներին համապատասխան նոր ձևեր, որոնց գործադրմամբ շինությունները ստանում էին ներքին լուսավոր, ընդարձակ տարածություններ, թեթև ու վերասլաց, լույս ու ստվերի խաղերով, քանդակազարդումներով ու որմնանկարներով հարստացած կերպարային արտահայտություններ:

966 թ. կառուցվող Սանահինի վանքի Ամենափրկիչ եկեղեցու արտաքին պատերը ձևավորվում են դեկորատիվ, ձգված համաչափությունների սյունակամարաշարերով: Կարճ ժամանակ անց, այդ նույնը՝ ավելի մեծ կատարելությամբ, կիրառվում է Անիի Մայր տաճարի և մյուս շինությունների պատերի մշակումներում, այնուհետև տարածվում ողջ Հայաստանում և Վրաստանում: Այդ յուրընտիր մոտիվը 150-200 տարի ուշացումով հասնում է Արևմտյան Եվրոպայի այնպիսի զարգացած երկրներ, ինչպիսին Իտալիան էր ու Ֆրանսիան, Գերմանիան ու Անգլիան:



Անիի Մայր տաճարի արևելյան խորանը և գմբեթակիր մույթերը:

XIX դարի երկրորդ կեսի և XX դարի առաջին կեսի ճարտարապետներից ու հետազոտողներից ոմանք այն կարծիքին էին, որ այդ մոտիվներով բնորոշվող ճարտարապետական ոճը Արևելք, այսինքն՝ Հայաստան է անցել Եվրոպայից, և որ այդ ոճով կառուցված շինությունները պատկանում են ոչ թե X դարին, այլ XIII և հաջորդ դարերին, քանի որ դրանց նախօրինակները Եվրոպայում XII-XIII դարերից վաղ չկային:

Ժամանակի նշանավոր գիտնականներ Շնաազեն, Միլլեն, Տեքսիեն (վերջինս՝ միայն սկզբնական շրջանում), Կոնդակովը չէին վստահում մեր հուշարձանների շինարարական վիմագիր արձանագրություններում պահպանված տեղեկություններին, ասում էին, թե դրանք, այդ արձանագրությունները, ավելի հին և պարզունակ ճարտարապետությամբ շինություններից տեղափոխված են XIII դարի շքեղորեն կառուցված պատերի վրա կամ պարզապես կրկնօրինակվել են: Առաջին և հզոր ծայնը, որ բարձրացրեց այդ թյուր կարծիքների դեմ, ավստրիացի մեծ գիտնական, արվեստաբան-հետազոտող Յոզեֆ Ստրժիգովսկին էր, որը դեռևս 1918 թ. հրատարակեց «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» երկհատոր աշխատությունը, աշխարհով մեկ ազդարարելով, որ այդ արվեստը, այդ ճարտարապետությունը ոչ թե Եվրոպայից է անցել Հայաստան, այլ ճիշտ հակառակը՝ Հայաստանից է անցել Եվրոպա:

***

Արևմտյան Եվրոպայի մեծ տերությունները՝ Ֆրանսիան, Գերմանիան, Անգլիան, Իտալիան, «մահմեդականներից քրիստոնեական սրբավայրերը ազատագրելու» առաքելությամբ, 1098 թ. շարժման մեջ դնելով հարյուր-հազարավոր թվակազմ ունեցող զինվորական ուժեր, արշավեցին Արևելք: «Խաչակրաց» անվանվող այդ արշավանքով մահմեդականներից ետ գրավված տարածքներում նրանք ստեղծեցին իրենց արևելյան պետությունները:

1098-1272 թթ. ընթացքում ծնունդ առան Եդեսիայի կոմսությունն ու Անտիոքի դքսությունը, Երուսաղեմի թագավորությունն ու Տրիպոլիի կոմսությունը: Գրավելով Կիպրոսը՝ խաչակիրները ստեղծեցին ֆրանսիական Լուսինյանների տոհմական իշխանությունը:

Խաչակիրները լավ հարաբերությունների մեջ էին հայկական Կիլիկիայի հետ: Նրանք 1097 թ. հայերի օգնությամբ սելջուկներից ետ գրավեցին Տարսոնը, Ադանան, Մամեստիան: Կիլիկիայի Լևոն Բ իշխանը բարեկամություն հաստատեց Ֆրիդրիխ I Շիկամորուսի հետ, ամրապնդելով իր քաղաքական դիրքերը, պատրաստակամություն հայտնեց օգնել խաչակիրներին, իսկ գերմանական կայսրը՝ թագ շնորհել նրան, ճանաչելով Կիլիկիայի թագավոր:

Արևելքի մահմեդական տերությունների ճնշման տակ և ներքին հակասություններով պայմանավորված, մոտ 200 տարի գոյություն ունենալուց հետո այդ պետական կազմավորումները կործանվեցին:

Խաչակիրները Կիլիկիայում գտնվելու երկու դարերի ընթացքում լավ ծանոթացան Արևելքին, յուրացրին տեղի մշակույթն ու արվեստը, և երբ վերադարձան իրենց երբեմնի հայրենիքը, հետները տարան այն ամենը, ինչ յուրացրել էին: Ավելին, իրենց հետ տարան նաև բնիկ քրիստոնյա ժողովրդի այն մասը, որը մահմեդականների շրջապատում այլևս չէր կարող գոյատևել:

Մշտական տարագրության մեկնողների մեջ կային գլխավորապես արհեստավոր-վարպետներ, ստեղծագործող արվեստագետներ, հմուտ կառուցողներ և ճարտարապետներ: Ահա այս ճակատագիրն ունեցող հայերն էլ Հայաստանից Եվրոպա տարան մեր միջնադարի արվեստն ու ճարտարապետությունը, դրանցում մարմնավորված հայրենի ճաշակն ու ավանդույթով ամրացած ստեղծագործական քանքարը:

Ճարտարապետությունը Եվրոպա տարավ մեզանում շռայլորեն աճած շինությունների զանազան տիպեր, նրանց ներքին ու արտաքին, կոնստրուկտիվ, նաև դեկորատիվ նշանակության տարրեր, ձևեր ու միջոցներ: Այս հիման վրա էր, որ Արևմտյան Եվրոպայում սկսեցին կառուցվել գոթական (և ռոմանական) անվանված ճարտարապետական կոթողներ: Դրանք, ըստ էության, ոչ այլ ինչ էին, եթե ոչ հայկական ճարտարապետության սկզբունքներով ստեղծվող կառույցներ: Ահա այդ ոճը մեծ արագությամբ տարածվեց, աճեց, բարգավաճեց, զարգացման շրջաններ ապրեց ու աշխարհին ներկայացավ իբրև ինքնուրույն, բարձր կարգի նորաստեղծ արվեստ: Որքան էլ այն զարգացավ, բայց բուն հիմքը մնաց Հայաստանից ներմուծվածը:

Ահավասիկ՝ գոթական շինությունը, որ մի միասնական կատարյալ համակարգ է, նրանում գործադրված մասերն ու տարրերը հայկականից չեն տարբերվում, նույնական են մամ որոշակի վերամշակումով: Գերմանացի նշանավոր գիտնական Շնաազեն Անիի Մայր տաճարի իր նկարագրությամբ հաստատում է վերոհիշյալ փաստը: Յոզեֆ Ստրժիգովսկու հայտնի «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» գրքի ռուսերեն թարգմանության (մեքենագիր) 452 և 453 էջերում կարդում ենք. «Շնաազեն նախ նկարագրում է շինությունը և համարում, որ այն ավելի, քան Քութաիսի տաճարը, հիշեցնում է Արևմուտքի քրիստոնեական եկեղեցիները, ինչպես դրսից, այնպես էլ ներսից, հատկապես արևմտյան պատի առանձնահատկություններով, որտեղ բացակայում են (եռանկյունի - *Տ. Մ.*) խորշերը, որտեղ ցածր դռները ձևավորված են աստիճանաբար դեպի ներս շարված երեքական զույգ կիսասյուների շարքերով, որոնք վերևից միացած են կամարներով»... Այդ տաճարի «ներքնատեսքը (որ կառուցված է գոթական ճարտարապետությամբ - *Տ. Մ.*) կարելի է ընդունել որպես իտալական եկեղեցի, բացառությամբ իր ժամանակի որոշ տարրերի»: Այս չպետք է զարմանք հարուցի, քանի որ ի սկզբանե առաջացել է Հայաստանում, ապա աճել ու զարգացել Արևմտյան Եվրոպայում: Հայ ճարտարապետության IX-XI դարերի վերածննդի որոշակի նվաճումները XIII-XIV

Գարուն. հուլիս 1997

© National Library of Armenia

դարերի Եվրոպայում նոր վերածնունդ ունեցան, արդեն նոր պայմաններում, նոր հնարավորություններով՝ ձեռք բերելով նոր որակ, նոր մակարդակ:

Այս մասին դեռևս 1936 թ. շատ որոշակի գրել է լիտվացի հայտնի արվեստաբան Յուրգիս Բալթրուշայտիսը (1903-1988): Նա բառացիորեն գրել է. «Բայց գոթական կառուցվածքի առաջացման ուժերի ամբողջության մեջ Հայաստանի արվեստն ունեցավ իր վճռական դերը»:

Այսպիսով, հունական և հռոմեական դասական ճարտարապետության զանգվածեղ, էնտազիսով սյուների համակարգի տիրապետող շրջապատում, հանկարծ Եվրոպայով մեկ եկեղեցիները սկսեցին կառուցվել նոր ոճով, ճակատները ձևավորվեցին բարակ, վերձիգ սյունակամարաշարերով, ըստ որում, ինչպես Հայաստանում, այնտեղ ևս, կենտ, զույգ, երեքական սյուներով և ուղղակի սյունախրձերով, հատկապես շենքերի անկյունային մասերում:

Փաստը մնում է փաստ, որ հայ ճարտարապետությունը լոկ նախապատրաստություն չէր գոթականի ու ռոմանականի համար, այլ նրա համակարգի մի զգալի, օրգանական մասը, որ առ այսօր պահպանում է իր ստեղծած ճարտարապետական ձևերի առկայությունը-ներկայությունը ժամանակի բոլոր կառույցներում:

Իր վերոհիշյալ «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» գերմաներեն աշխատության մեջ Ստրժիգովսկին պարզորոշ գրում է. «Արևմուտքի տեսակետից, Անիի Մայր տաճարը հանդիսանում է հայ ճարտարապետության ստեղծած ամենաարժեքավորը»: Ստրժիգովսկին նաև գրում է. «Հետևաբար, մեզ մնում է միայն խոստովանել (ընդունել) այդ արձանագրության (նկատի ունի Մայր տաճարի շինարարական արձանագրությունը - *Տ. Մ.*) բնագիր (իսկական) լինելը, միաժամանակ որպես փաստ ընդունելը, որ հայերը մոտավորապես 150 տարի վաղ են կառուցել գոթական ձևով, քան այդ տեղի է ունեցել Արևմուտքում» (գիրք I, էջ 159-164):

Կարևոր նշանակություն տալով մեծ գիտնականի կող-ից անժխտելի փաստի արձանագրմանը, լինելով ոչ եվրոպացի, այլ հայ ճարտարապետ և հետազոտող, ինձ իրավասու եմ համարում Ստրժիգովսկու այդ կարևոր սահմանումը վերաշարադրել՝ իրերը կոչելով իրենց իսկական անունով, այսպես՝ «եվրոպացիները մոտավորապես 150-200 տարով ուշ են սկսել կառուցել հայ ճարտարապետությամբ»: Հակառակ դեպքում պատկերը ստացվում է ոչ ճշգրիտ՝ որ իբր, անկախ բոլորից, գոյություն է ունեցել գոթական ոճը, հայերը նրա ձևով մոտ 150 տարի վաղ են սկսել կառուցել, քան եվրոպացիները, մինչ իրականում այնպես է եղել, ինչպես բերվում է մեր շարադրանքում:

Գառնիի հեթանոսական տաճարը գործին լավ տեղյակ Նիկողայոս Բունիաթյանը համարում է կառուցված հունա-հռոմեական ոճով: Հայտնի է, որ հունական ճարտարապետությունն առանձին է, ինքնուրույն: Ինքնուրույն է նաև հռոմեական ճարտարապետությունը: Ու թեպետ նրանց սյուների համակարգերը միմյանց նման են, բայց ունեն տարբեր համաչափություններ: Նկատի ունենալով, որ Գառնիի հունական ոճով կառուցված տաճարը դրված է բարձր պատվանդանի վրա, ինչպես հռոմեացիներն էին անում, գիտնականն արդարացիորեն այն անվանում է հունահռոմեական: Գոթական ճարտարապետական կառույցներում դեկորատիվ սյունակամարաշարերում սյուները հայկական ծագում ունեն, նաև կամարների որոշ մասը, մյուսները բարդ հյուսվածքի են: Ելնելով վերոհիշյալից՝ մենք հնարավոր ենք համարում անվան միավորումը՝ հայ-գոթական. սա է ճշգրիտ անվանումը:

Այսօրվա եվրոպացիները կհամաձայնեն, թե չեն համաձայնի անվան այս ձևին, իրենց գործն է, բայց մենք պարզապես իրավունք չունենք այլ կերպ վարվելու: Անցած դարերում մեր կողմից այդ չի արվել: Իսկ եվրոպացիները, դեռ մինչև մեր դարը, կարծել են, թե իրենք են ստեղծել, իսկ հայերը վերցրել են:

Այս հարցը շատ է հետաքրքրել մեր մեծերին: Ճարտարապետ Միքայել Մազմանյանը, որ եղիշե Չարենցի մտերիմներից էր, մի զրույցի ժամանակ տեղյակ է դարձրել բանաստեղծին, թե X դարի հայ ճարտարապետությունը ինչ մեծ դեր է ունեցել Արևմտյան Եվրոպայում գոթական և ռոմանական ճարտարապետությունների առաջացման գործում: Ահա այդ հարցն իր հետքն է թողել բանաստեղծի նուրբ հոգում, և նա չի կարողացել լռությամբ տանել: Իր ընկերոջը՝ Միքայել Մազմանյանին նվիրած «Ուղերձ մեր հանճարեղ վարպետներին» բանաստեղծության X տողը հյուսել է այսպես. «Մեր երկրից մինչև Արևմուտք՝ սնելով գոթականն անմար...»:

Միքայել Մազմանյանն ու Եղիշե Չարենցը համեստորեն նշել են, որ հայերը սոսկ սնել են «գոթականն անմար...»: Մինչդեռ ոչ թե «սնել», այլ նախ «ծնել» և հետո եվրոպացիների հետ հավասար մասնակցություն են ունեցել ամբողջականի ստեղծմանը՝ այն էլ լինելով առաջինը, կանխելով նրանց 150-200 տարով: Սա կատակ չէ, ճիշտ է ասվում՝ «Ի սկզբանե էր բանը». որևէ երևույթի անուն կնքելիս, նկատի է առնվում նաև ստեղծման ժամանակը և առաջնահերթությունը:

Նրանք, ովքեր կփորձեն զարմանալ, թող նկատի ունենան, որ մենք ենք զարմանում, թե այս ինչքան համեստ ու համբերող են եղել հայերը, որ այսքան ուշ են հանդես գալիս պաշպանելու իրենց ճշմարտությունը:

Գարուն. հուլիս 1997

Սերգեյ Դովլաթովը ծնվել է 1941 թ. Ուֆա քաղաքում: Ապրել, սովորել է Լենինգրադում: Զորակոչվել է խորհրդային բանակ, որպես վերակացու ծառայել է հատուկ ռեժիմի բրեական ճամբարում: Էստոնիայում գրաղվել է լրագրողությամբ, Պուշկինյան արգելոցում եղել է էքսկուրսավար: ԽՍՀՄ-ում չի տպագրվել. նրա առաջին գրքի շարվածքը ոչնչացվել է ՊԱԿ-ի հրահանգով:

1976 թվականից Ս. Դովլաթովը տպագրվել է Արևմուտքում, ինչի համար հեռացվել է ԽՍՀՄ ժուռնալիստների միությունից: 1978 թ. արտագաղթել է ԱՄՆ, ապրել է Նյու Յորքում, տասներկու տարում լույս է ընծայել տասներկու գիրք, որոնք տպագրվել են Ամերիկայում ու Եվրոպայում՝ հինգ լեզուներով:

1990 թ. ամռանը Նյու Յորքում ստեղծագործական փառքի ծաղկուն շրջանում հանկարծամահ եղավ Սերգեյ Դովլաթովը: Նրա կենդանության օրոք այդպես էլ ոչ մի գիրք չտպագրվեց հայրենիքում:

ՍԵՐԳԵՅ ԴՈՎԼԱԹՈՎ

ՋՈՆԱ

Պահակախցում երեքով էինք: Օպեր Բորտաշևիչը խառնում էր ճմռթված, մաշափայլ խաղաթղթերը: Ժամապահ Գուսևը փորձում էր քնել՝ վառված սիգարետը բերանում: Ես սպասում էի, մինչև կեռար ջուրը: Թեյամանի չորսբոլորը հացի կտորներ էի շարել:

Բորտաշևիչն ալարկոտ ասաց.

- Լավ, վերցնենք, օրինակի համար, կնիկներին: Ասենք, հետը լավ ես վարվում՝ կինո, բիսկվիտ, խոսք ու զրույց... Գոգոլին ու Բելինսկուն ես խառնում ասածիդ... Ինչ-որ բոզական օպերաներ ես տանում ... Հետո, տեղը տեղին՝ տեղաշոր: Իսկ մեր մադամի մտքին մի բան կա՝ պսակվիր, գարշա՛նք: Սկզբում զազսը, հետո նոր ստոր բնազդները... Տեսեք, բնազդները նրա սրտովը չեն: Իսկ եթե ինձ համար դա սուրբ բան է, այդ դեպքում՝ ի՞նչ...

- Էլի ջհուդներն են պատճառը,- ավելացրեց ժամապահը:

- Ջհուդները՝ ի՞նչ,- չհասկացավ Բորտաշևիչը:

- Ասում եմ, ջհուդներ են ամեն տեղ: Ռայկինից մինչև Կարլ Մարքս... Շատանում են սնկի պես... Օրինակի համար, Չեբյուի վենդիսպանսերը: Բժիշկները՝ հրեա, հիվանդները՝ ռուս: Դա եղավ կոմունիստաբա՞ր :

Այդ պահին զանգահարեցին գրասենյակից: Բորտաշևիչը վերցրեց ընկալուչն ու ասաց.

- Քե՛զ են ուզում:

Լսեցի կապիտան Տոկարի ձայնը:

- Անցե՛ք ինձ մոտ, և շտա՛պ:

- Ընկեր կապիտան, իմիջիայլոց, հիմա ժամը ինն է,- ասացի:

- Իսկ դուք հայրենիքին ծառայում եք միայն մինչև վե՞ցը,- ընդհատեց ինձ կապիտանը:

- Էլ ինչի՞ են գրաֆիկ կազմում: Վաղն առավոտ ես ծառայության մեջ եմ:

© National Library of Armenia